ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 3 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի ավագանին
որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 13-ի նիստի հետևյալ **օրակարգը.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի 2018 թվականի երկրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին:
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրի կադաստրային քարտեզում առկա անճշտության ուղղման նպատակով հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկությունը քննարկելու մասին:
3. <<Խաչատրյան եղբայրներ>> սահմանափակ պատասխանատվությաբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,085 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից փոքր հզորության հիդրոէլեկտրոկայանի ճնշումային խողովակաշարի կառուցման նպատակով հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք / սերվիտուտ/ տրամադրելուն մասին
4.Սյունիքի մարզի Գորայք համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 17-ի նիստի թիվ 13-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5.Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Գորայք համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորայք համայնքի ղեկավար՝ **Առուստամ Առուստամյան**

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,

ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-

րդ կետով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 3 կողմ, 1 դեմ,

0 ձեռնպահ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի 2018թվականի երկրորդ եռամսյակում համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն: /կցվում է/

Գորայք համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավար՝ **Առուստամ Առուստամյան**

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք

2018թ. երկրորդ եռամսիակի կատարողական

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. 2018Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ -184.211,6
2. 2018Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ – 82.923,9

2018Թ.Գորայք համայնքի բյուջեի երկրորդ եռամսյակի մուտքերը ըստեկամուտների

h/h	Եկամուտների անվանումը	Տարեկան պլանը	2-րդ եռամսիակի պլանը	Կատարողականը	
				Հ.Հ.դրամով	Տոկոսով %
1	Հողի հարկ	22.294,3	10.493,19	556,089	0,05 %
2	Գույքահարկ	5.225,4	1.168,79	1.168,79	68 %
3	Տեղական տուրք	720,0	186,4	227,1	121 %
4	Այլմուտքեր,ջրի վարձ, աղբահանություն	2.691,6	1.345,8	0	0%
5	Հողի վարձավճար	129.354,7	33.097,68	21.136,45	64%
6	Սեփական եկամուտներ	162.284,0	46.835,13	23.084,43	49,2%
7	Դոտացիա	21.925,6	5.481,4	5.481,4	100%
8	Կատարողական Ընդամենը	182.211,6	52.316,53	28.569,83	57,5%

2018թ.Գորայք համայնքի ծախսային մաս

Հոդված	Ծախսի անվանումը	նախատեսված	Փաստացի
4111	Աշխատավարձ,հավելավճար և այլն	7.898,6	7.601,38
4212	Էներգետիկ ծախս	425,0	312,0

Եռամսիակի կատարողականը ըստ համայնքների

h/h	Բնակավայրի անվանումը	Հողի հարկ	գույքահարկ	Ընդ.հավաքագրված
1	Գորայք	224,25	228,2	452,45
2	Ծղուկ	58,4	231,0	289,43
3	Սառնակունք	38,0	64,0	102,0
4	Սպանդարյան	56,15	527,0	583,15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N21 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ԱՌԿԱ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասի դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> N186-Ն հրամանի և հաշվի առնելով Գորայք համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 3, դեմ՝ 1, ձեռնպահ՝0, համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրի կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալի ուղղման առաջարկությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից 0.015 հեկտար /կադաստրային ծածկագիր 09-084-0004-0001-ից/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<արդյունաբերական օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ, քարի վերամշակման ապտադրամասի սպասարկման համար:

Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Գորայք համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորայք համայնքի ղեկավար՝ **Առուստամ Առուստամյան**

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N 22-Ա

<<ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՂՈՒԿ ԵՎ ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՓՈՔՐ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ / ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, /կողմ , դեմ , ձեռնպահ / համայնքի ավագանին **որոշում է**.

1 ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Ծղուկ բնակավայրի տարածքից, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողերից 0,085 հա

մակերեսով,/կադաստրային ծածկագիր 09-049-0106-0001/ հողատարածքը սերվիտուտի իրավունքով տրամադրել **<<ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը** /փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի ճնշումային խողովակաշարի անցկացման համար 25/ քսանհինգ տարի/ ժամկետով, սահմանելով տարեկան 7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

2. Տալ համաձայնություն ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Ծղուկ բնակավայրի տարածքից, պետական սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողերից 0,01321 հա մակերեսով, /կադաստրային ծածկագիր 09-049-0400-0001/ հողատարածքը սահմանափակ օգտվելու /սերվիտուտ/ իրավունքով տրամադրել **<<ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը** /փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի ճնշումային խողովակաշարի անցկացման համար 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, սահմանելով տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

3. Տալ համաձայնություն ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Սառնակունք բնակավայրի տարածքից, պետական սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողերից 0,00441 հա մակերեսով,/կադաստրային ծածկագիր 09-081-0584-0001/ հողատարածքը սահմանափակ օգտվելու /սերվիտուտ/ իրավունքով տրամադրել **<<ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը** /փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի ճնշումային խողովակաշարի անցկացման համար 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, սահմանելով տարեկան 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

4.Համայնքի ղեկավարին ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Գորայք համայնքի ավագանու անդամներ

Գորայք համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորայք համայնքի ղեկավար՝ **Առուստամ Առուստամյան**

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N23 -Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի առաջին մասի 32-րդ,77-րդ հոդվածի 3-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 3 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ Գորայք համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի 2018թվականի ապրիլի 17-ի նիստի թիվ 13-Ա որոշմամբ հաստատված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ցանկում կատարված փոփոխությունները ըստ կցվող հավելվածի

Գորայք համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորայք համայնքի ղեկավար՝ **Առուստամ Առուստամյան**

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2018թ N24 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի առաջին մասի 21) կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, 688-րդ հոդվածի առաջին մասով ու 689-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ Գորայք համայնքի ավագանին **որոշում է՝**

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայքի համայնքի սեփականություն հանդիսացող 2018թ-ի արտադրության ՄԱԶ մակնիշի VIN Y3M490143/0000054, 579LL70հաշվառման համարանիշով մասնագիտացված աղբատար մեքենան անհատույց և 3 տարի օգտագործման ժամկետով հանձնել Սիսիանի համայնքին՝ Գորայքի և Սիսիանի համայնքներում կոշտ կենցաղային աղբի հեռացման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

3. Աղբահանությունը կատարել ըստ բնակավայրերի կազմված սխեմաների /կցվում է/

4.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխողգործառույթների իրականացումը:

Գորայք համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մ. Գասպարյան

Մ. Թադևոսյան

Հ. Թորոսյան

Գ. Խոսրովյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորայք համայնքի ղեկավար՝ Առուստամ Առուստամյան

2018թ. հուլիսի 13
Գ. Գորայք